

**ԱՄՔՈՒԼԱՏՈՐ-ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ
ՔԱՅԼԵՐԸ**

1

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալու նպատակով բնակիչը դիմում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության մատենավարման բաժին

2

Ամբուլատոր բժշկական քարտը և այցի հաշվառման ձևը ստանալուց հետո բնակիչը դիմում է սպասարկող ԱԱՊ բժշկին:

3

Առաջնային նեղ մասնագիտական խորհրդատվության և/կամ լաբորատոր-ախտորոշիչ գործիքային հետազոտությունների իրականացման անհրաժեշտության դեպքում ԱԱՊ բժշկի (ընտանեկան բժշկի, տեղամասային թերապևտի) ուղեգրմամբ* բնակիչը դիմում է համապատասխան նեղ մասնագետին և/կամ իրականացվում են նշանակված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ:

* ուղեգրումն իրականացվում է համապատասխան ուղեգրի ձևաթղթով և/կամ համապատասխան գրառմամբ ամբուլատոր բժշկական քարտում

4

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության նեղ մասնագետն իրավունք ունի ինքնուրույն ուղեգրել այլ նեղ մասնագիտական խորհրդատվության կամ լրացուցիչ ախտորոշիչ հետազոտության կամ նշանակել բուժում այդ մասին տեղյակ պահելով ուղեգրող ԱԱՊ բժշկին:

5

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունից դուրս մասնագիտացված բուժօգնության կամ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրման գործընթացը կազմակերպվում է ԱԱՊ բժշկի կողմից